

Պ Ր Ո Ֆ. Է. Զ Ի Ի Բ Շ Մ Ա Ն

Այս տարուայ սկզբին հայագիտութիւնն ունեցաւ մի մեծ և ցաւալի կորուստ։ Մեռաւ Շտրազըուրգի համալսարանի համեմատական լեզուաբանութեան պրոֆեսոր և նշանաւոր հայագէտ Հայնրիխ Հիւբշմանը։ Նա ծնուած էր 1848 թուին և հայերէն ուսել էր Վենետիկի Մխիթարեանների մօտ։ Համալսարանում նա կարգում էր սանսկրիտի, պարսկերէնի, հայերէնի և այլ լեզուների ու նրանց համեմատական քերականութեան մասին։ Նորա գասախօսութիւնները չափազանց մասնագիտական բնուորութիւն էին կրում և այդ պատճառով էլ քիչ ունկնդիրներ էին գրաւում։ Երկու տարի առաջ Մարբուրգի պրոֆ. Ենդէնի յանձնարարութեամբ պատիւ ունեցայ յարգելի պրոֆեսորի հետ ծանօթանալու. մենք սկսեցինք խօսել Հայաստանի գրութեան, հայերի և նորա մօտ ունկընդրած հայ ուսանողների մասին։

Պրոֆեսորը ցաւ յայտնեց, որ առիթ չէ ունեցել հայերին իրենց հայրենիքում տեսնել. նա ճանաչում է հայերին իբրեւ մի առողջ և կուլտուրական ժողովուրդ և չի հասկանում, թէ ինչո՞ւ մի քանի եւրոպացի ճանապարհորդներ հայերին խարդախ և խաբբայ վաճառականներ են համարում։ Այս տեսակ լուրերի աղբիւրի մասին նա ինձանից մի քանի բացատրութիւններ լսելուց յետոյ՝ գոհ մնաց և զայրոյթ յայտնեց եւրոպայի անտարբերութեան և գերմանացիների հայակեր քաղաքականութեան համար, որով նոքա թողնում են մի կուլտուրական ժողովուրդ բարբարոս քուրդերի ձեռքով նահատակուելու։ Յարգելի պրոֆէսորը խօսում էր սիրալիր և երկարօրէն։ Նա ինձ ցոյց տուաւ իւր հայերէն գրքերի բաւական հարուստ մատենադարանը և ի վերջոյ հայկազեան բառգրքի մի հատորը առաջն դնելով ասաց. «Ես իսկապէս հայերէն չգիտեմ. իմ հայերէնի ամբողջ պաշարը Ձեր մի քանի գրաբառ մատենագիրներն են և յատկապէս այս

բառարանը: Եւ իրաւ յարգելի պրոֆէսորը հայերէն բնաւ չէր կարող խօսել և հայերէն խօսքերն արտասանում էր շատ վատ. և այդ հասկանալի է. նա հայերէն գործնականապէս չէր սովորել, այլ իբրեւ լինդուխտ միայն բառերի համեմատութեան և նրանց քերականական ձևերի հետ գործ ունէր: Իւր խօսքերի և յայտնած կարծիքների մէջ չափազանց զգոյշ էր: Խօսելով այն մասին, որ հայ լեզուն, պատմութիւնն ու գրականութիւնը դեռ ըստ արժանւոյն չեն ուսումնասիրուած, ցաւ էր յայտնում, որ դեռ շատեր կան, որոնք բաւականանում են այդ խնդիրների մասին մեզ հասած սուտ ու սխալ տեղեկութիւններով: Նորա կարծիքով ամեն տեսակ բանասիրական քննութիւնից առաջ անհրաժեշտ է անմիջապէս ձեռնարկել հին հայ հեղինակների գիտական հրատարակութեան. «որովհետեւ, ասում էր նա, Ձեր մատենագիրները լիքն են քերականական անկանոն ձևերով. նախ պէտք է ստուգել, թէ դոքա ապիկար արտագրողների սխալներ չ'են»: Նա առհասարակ հիացմունքով էր խօսում մեր Եւրոպացի դարու մատենագիրների և յատկապէս աստուածաշնչի թարգմանական լեզուի մասին: Իմանալով՝ որ ես մտադիր եմ Դ. Անյաղթով զբաղուել, եռանդով խորհուրդ էր տալիս ձեռք վեր առնել այդ գծուար աշխատութիւնից, որովհետեւ նա չէր հասկանում Դաւթի լեզուն. իւր կողմից առաջարկում էր ինձ զբաղուել Բարթուղիմէոս առաքելի հայկական աւանդութեամբ և այդ աւանդութեան շուրջ եղած գրականութեամբ: Երբ ես այնուամենայնիւ Անյաղթով զբաղուել աւելի հետաքրքրական համարեցի, նա հարցրեց՝ թէ յունարէն գիտե՞մ. և երբ դրական պատասխան ստացաւ՝ շատ զարմացաւ, որովհետեւ նրան յայտնի էր, որ մեր միջնակարգ դպրոցներում յունարէն և լատիներէն լեզուները չեն աւանդւում: Նորա կարծիքով հայագիտութեամբ զբաղուել առանց այդ լեզուներն իմանալու անհնար բան է: «Հայոց միջնակարգ դպրոցներում անպատճառ պիտի աւանդուին այդ լեզուները, որովհետեւ հայագիտութեամբ զբաղուելը ամենից առաջ հայերի

պարտքն է. նառ խղճալի տպաւորութիւն է թողնում, ասում էր նա, որ հայ ուսանողներ մեզ մօտ են գալիս բարձրագոյն կրթութիւն ստանալու, լեզուաբանութիւն կամ պատմութիւն ուսումնասիրելու, այն ինչ կլասիք լեզուներից ոչ մէկը չգիտեն: Չնայած որ նոքա մեծ եռանդ և հետաքրքրութիւն են ցոյց տալիս, բայց այնուամենայնիւ մեծ հետեւանքների չեն հասնում, որովհետեւ այդ հասակում լատիներէն կամ յունարէն սովորելը անկարելի է. և պէտք է ասել, որ հայ ուսանողները միշտ աւելի տարլքով են լինում քան մերոնք:

Իմ առաջին ծանօթութիւնից յետոյ ես յաճախ առիթ ունէի նրան այցելելու, մանաւանդ երբ նրան մի գրաբառ կամ աշխարհաբառ հատուած էր պատահում, որ նա չէր կարողանում հասկանալ. նա հրաւիրում էր ինձ կարևոր կտորը թարգմանելու, և այսպիսի առիթներով մենք երկար խօսում էինք գրաբառի և աշխարհաբառի և յետոյ զանազան դաւառաբարբառների քերականական տարբերութիւնների մասին: Յիշում եմ. մի անգամ կանչեց և ձեռքս տուաւ Հանդէս Ամսօրիայի համարներից մէկը, ուր տպուած էր Յովհաննէս Կոլոտ պատրիարքի կենսագրութեան վերաբերեալ անկանոն գրաբառով գրուած մի հատուած և խնդրեց, որ թարգմանեմ: Հատուածի միտքը չափազանց պարզ էր, բայց գորա մէջ մի բայական անկանոն ձև կար, որ շատ էր չարչարել յարգելի պրոֆէսորին: «Առաւօտից մինչև հիմայ, ասաց նա, փնտռում եմ այս ձևը այս բառարաններում—ցոյց տալով հայկազեան և առձեռն բառարանների վերայ—բայց չեմ գտնում. հոգիս դուրս եկաւ, մանաւանդ որ աչքերս վերջին տարեներում շուտ յոգնում և սաստիկ ցաւում են»: Եւ իրաւ յարգելի պրոֆէսորը վերջերը շատ էր գանգատւում իւր աչքերից: Նա չափազանց կարճատես էր և գործ էր անում սեւ ակնոցներ: Նորաֆաշխատութեան սենեակի լուսամուտները միշտ կիսածածկէին: Երբ մի գիրք էր հարկաւոր լինում, նա վեր էր կենում, նախ վառում էր լուսաւորութեան գազով վառուող մի փոքրիկ ճրագ և սկսում

էր երկար փնտռել: Շատ հետաքրքրական էր տեսնել հասակն առած պրոֆ. Հիւրշմանին կէսօրին ճրագը ձեռքին իւր սենեակում: գիրք փնտռելիս: Նա հայերէն ամսագրերից միայն հանդէս Ամսորիային էր հետևում:

Մի քանի խօսք էլ այն մասին՝ թէ պրոֆ. Հիւրշմանը իբրև հայագէտ ինչ նշանակութիւն ունի: Նրանից ուռաջ և դրա ժամանակ մի քանի յայտնի հայագէտներ՝ ինչպիսիք են Պէտէրման, Վինդիշման, Դը Լադարդ և Ֆ. Միւլլըր ցոյց էին տուել արդէն, որ հայոց լեզուն հնդեւրոպական է. բայց ուշագրութիւն դարձնելով այն հանգամանքի վրայ, որ այդ լեզուում բաղմամբիւ բառեր կան իրանական ծագմամբ, ստիպուած են եղել ենթադրել, որ հայ լեզուն հնդեւրոպական լեզուներից արևելեան իրանեան ճիւղին է պատկանում: Բայց պրոֆ. Հիւրշմանը իրեն յատուկ զգուշանորութեամբ և հետախուզողի լրջութեամբ ցոյց տուեց, որ հայերէնի մէջ իրանեան բոլոր բառերը փոխ առնուած են, ինչպէս որ յունարէնից էլ, ասորերէնից էլ փոխ առնուած շատ բառեր կան: Այնուհետև նա ջոկելով զուտ հայկական արմատական բառերը և ուսումնասիրելով այդ բառերի փոփոխութեան եղանակն ու հնչիւնաբանութիւնը՝ եկաւ այն հաստատուն եզրակացութեան, որ հայերէնը իրանեան լեզուաճիւղին չի պատկանում և որ նա առանձնայատուկ տեղն ունի հնդեւրոպական լեզուների ընտանիքի մէջ: Այս հայեացքի համար նա երկար բանակոխ մղեց Դը Լադարդի հետ, մինչև որ յաղթութիւնը իւր կողմը մնաց, որը նորա գիտութեան մատուցած ամենակարևոր ծառայութիւնն է: Այնուհետև նա կազմեց մի հայերէն քերականութիւն՝ որ շատ լուրջ աշխատութիւն է: Գրքի վերջումը նա 2188 արմատական համարուած բառերի ծագումն է բացատրում, համեմատելով ուրիշ լեզուների հետ. 2188 բառից միայն 438-ն է նա զուտ հայկական համարում. մնացածը փոխ առած:

Մեզ համար առանձին կարևորութիւն ունի նորա «Հին հայկական տեղական անուններ» աշխատութիւնը:

որին կցուած է մի քարաէզ, նա ունի բազմաթիւ ուրիշ գործեր էլ, որոնք մի առ մի թուելը միտք չունի: Նորա շատ յօդուածները ղետեղուած են «Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft» և «Zeitschrift für Vergleichende Sprachforschung» հանդէսներում:

Նորա թաղումը տեղի ունեցաւ Ֆրայբուրգում 23-ն յունուարի: Շտրազբուրգի համալսարանում նորա ուսուցչապետական ամբիօնը գրուեց Դր. Քարստ, որը իւր մեծահատոր աշխատութիւններով Կիլիկեան հայաբարբառի և Սմբատի Օրէնագրքի մասին մեծ ապագայ է խոստանում:

Մ. ԽԱՅԻԿԵԱՆ

ԴԱԻԻԹ ՀԱՐՔԱՑԻՆ

Ե Ի

ՊԵՏՐՈՒՅ ԳԻՐԲԸ

Դաւիթ Հարքացու անունով միայն մի գրութիւն է հասել մեր ձեռքը, չհաշուելով նորան վերագրուած Անյաղթի յայտնի փիլիսոփայական երկերը և ուրիշ կրօնական գրութիւններ, որոնց մասին միայն անորոշ տեղեկութիւն ունինք*: Այդ գրութիւնը Դաւուստ Տ. Մկրտչեանի հրատարակած «Դաւիթ Հարքացւոյ եւ փիլիսոփայի որ յիմաստասիրական եւ յիմաստասիրելի հարցուածս» տետրակն է**, որ կռուան կարող է լինել մեզ մատենադրա-

* «Արարատի» 1907 թ. Յունուարի և Մարտի տետրակներում պարզել ենք, որ Դաւիթ Հարքացին և «Բան հաւատոյ» գրութեան (Արարատ 1906 թ. Մարտ) հեղինակ Դաւիթ փիլիսոփան նոյն անձնաւորութիւնն է, և թէ նա ապրում էր Է. դարու երկրորդ կիսում Անտառաս կաթողիկոսի և Աշոտ պատրկի ժամանակները:

** Դաւիթ Հարքացի. Վաղարշապատ, 1903: